ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4541-Ա « 15 » սեպտեմբերի 2026թ.

«ԵՐԵՎԱՆԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՆԵՏԱ ԲԱԲԱՅԱՆԻՆ ԲԵԼԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԲՐՅՈՒՍԵԼ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԲԵՌԼԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Անետա Բաբայանի 11.09.2026 թվականի Ն/57606-26 գրությունը՝ աշխատանքային պարտականությունների կատարման շրջանակներում, «European Train և InnoTrans 2026» համակցված միջազգային ֆորում-ցուցահանդեսին մասնակցելու նպատակով.

1.«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Անետա Բաբայանին՝ 2026 թվականի սեպտեմբերի 20-ից 26-ը գործուղել Բելգիայի Թագավորության մայրաքաղաք Բրյուսել և Գերմանիայի Դաշնային Հանրապետության մայրաքաղաք Բեռլին:

2. Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերը հոգում է հրավիրող կողմը:

3.«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Անետա Բաբայանի բացակայության ընթացքում «Երևանի կառուցապատման ներդրումային

ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն ՀՈԱԿ-ի տնօրենի տեղակալ Իզաբելլա Մուրադյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ